Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն Ու Մ

Ի պատասխան № **SILD-AFG-03 Աշտարակ և Մեծամոր համայնքների համար աղբատար մեքենաների գնում (բաղկացած 3 լոտից)** մրցույթի վերաբերյալ 27.01.2023թ. Armeps համակարգով ստացված հարցմանը ներկայացնում ենք հետևյալ պարզաբանումը.

Հարց՝

Հարգելի գնահատող հանձնաժողով,

խնդրում ենք պարզաբանել, թե Հրավերով սահմանված տեխնիկական բնութագրով /խոսքը վերաբերվում է մասնավորապես 1 և 2 լոտերին/ սահմանված աղբի խտացման գործակից նշելով 4 և ավելի՝ պատվիրատուն ինչ նկատի ունի 4 և ավելի սահմանելով և հաջորդիվ սահմանելով մանիպուլյատորի բեռնունակություն առնվազն 500 կգ՝ պատվիրատուն նկատի ունի, այսինքն առանձին թե թափքին ամրացված:

Նմուշների առկայության դեպքում՝ խնդրում ենք տրամադրել գծագրեր կամ նկարներ:

Պատասխան՝

Հարգելի հայտատու,

1. Աղբի խտացման գործակիցը 4 և ավելի նշելով պատվիրատուն ի նկատի ունի աղբի ծավալի առավելագույն խտացման սահմանը: Օրինակ՝ եթե կոնտեյներում լցված է 8 խ/մ աղբ, մամլիչը այն կարող է սեղմելով դարձնել մինչև 2 խ/մ: Եթե սեղմելու առավելագույն հնարավորությունը 4 գործակցից բարձր է՝ մեր պահանջը լիովին բավարարում է:
2. Էական է մանիպուլյատորի բեռնունակության պահանջի պահպանումը՝ անկախ մանիպուլյատորի ամրացման եղանակից:

Հարգանքով,
Ռոզա Դանիելյան
№ SILD-AFG-03 մրցույթի քարտուղար
ՀՏԶՀ

30.01.2023թ.